59. ՔԱՋԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԻ ՀԵՔԻԱԹ

Կէղի, չէղի, իրիկ ու կնիկ մի կէղնի։ Ուրանց իրեք տղա կէղի։ Էդ իրեք տղեն ա կթ։իռոշկցուն, վայնաշարա կփեթցուն, կկարքեն իրեք լէ, իրեք խարս կբերին ուրին։

Կնիկ կեսա ուրին. «Իմ խարսներ չհել ին, թըխ խաց չտանին, ես տանիմ»։ Հ'ինք լէ չհել ա։

Գելի կխեծի ծին, խաց կթալա խուրջին ու կթալա վըր պառեկին ու կէրթա։

Ճամբախ կնիկ կտեսի օձ մի, գելի հ'առաճ, կիգա դիկ վըր պոչին, ծիու հ'առեճ կառնի։ Կնիկ անգաջ չէնա, կքշա գընցնի։ Խաց կտանի, կէրթա ուր իրկան, ուր տղեքներուն ու մշկներուն կեսա.

—Ես էկա, հմալ խորոտ, կարմիր ճոչ օձ մի հ'ելավ կանավ ուր պոչին, իմ ծիու հ'առեճ առավ, չթորկեր ես հ'իգենք։ Հըմալ ես վախեցա, հ'ախու պտի մեռնենք։

Ռընչբար ու իրեք տղեն կեսին.— Մենք օր օնի էղինք, կէնինք ընդրան թութուն՝ օձի էղի ու խացվորի հ'առեճն առ"նի։

Ռընչբար խաց կուտին, բեռ կթալա ծիու պառեկին, կխեծի գիգա տուն։

Հ'իրկուն լէ խաց կիտա ռընչբրին, կուտին, կխմին, կքնին, գելին կավլին, կխորտին, կվառին թունդիր, կվառին, դիչու, գելի ղխաց կթխա, գընա զուր խաց, բղիկ կսարկա, կգնա զբեռ ու կթալա ծիու պառեկին, գելի կխեծի, կքելա կէրթա։

Կէրթա էլման էդտեխ էն օձ գելի հ'առեճ, կկանի վըր պոչուն։

Կնիկ կեսա.— Աստծու հայվան, հ՞որի՞ իմ հ՞առեճ կառնիս, ես ճրու կէրթամ դու իմ հ՞առեճ կառնիս, ղխաց կտանիմ՝ դու իմ հ՞առեճ կառնիս, աստծու հայվան, ի՞նչ իս տվեր ընծիկ, չկերնաս առնիս։

Օձ իդա հախս գելի զրուցք, կեսա.— Իդա յոթ տարի ախչըկնութ, իդա քյանի տարի լէ կնկնութ քու ետև կզվռնիմ։

Կեսա.— Դու օձ, ես իսան, էդ իմա՞լ կէղի։

Օր կասի դու օձ, ես իսան, օձն ուր օձվինի շապիկ կխանա, գիտա զինք շանցք, գելի տսվերկու տարեկան խորդ (տղա) մը, ուր օսկե ծամեր սրտին կծեծա, օսկի զընչիլով, քամարով, օր դու ուտիս, չխմիս, թամաշա էնիս, խորոտ ա։

Կեսա.— Ես Քաջանց թագավորի տղեն իմ։

Կնիկ կեսա.— Ապա ես իմա՞լ խրտ քըզի իտամ առնիմ։

Կեսա.— Ես հ՞իրիկուն կէղիմ բալաք կատվի նման, դիգամ, ռընչբար նստուկ ին խաց կուտին, ընդոնց քասեն կղարկիմ կթափիմ, օր դու գիս ճանչնաս։ Ռընչբար կծիծղան վըր ընծիկ, ես գիգամ, կնստիմ վըր ջլերուն, դու իգաս խրտ իրար զրուցինք։

Իդա հախս կնկան ճամփախ կիտա, կնիկ խաց կառի կէրթա։ Կտանի էտտեխ ուր տղեքներ, ուր մշկներ կուտին խաց. կխմին, կնիկ կթալա բեռ ծիու պառեկին, գիգա տուն։

Հ՞իրկուն ա։ Ռընչբար էկավ։ Խաց կդնին ռընչբրին, կնկա աչք հա ըդ օձի ճամբախն ա, կեսա. «Հ՞ուրա, Քաջանց թագավորի տղեն խափեց, չէկավ»։ Կտեսի բալաք կատու մի դռնեն էկավ, գարկեց ճժերու քասեն թափեց, գնաց նստավ յորղան-գոշկի վրեն։ Էդ կնիկ լէ կէրթա, կնստի էդ տղի խեչ։ Էդ կատուն էդ կնկա աչքին տսվերկու տարեկան խորդմ ա, ուր տնրցոց աչքին կատու ա։

Գելին տեխ կթալին, կքնին, էդ կատուն կնկան մեկ կուշտ կքնի, իրիկ լէ մեկ կուշտ կքնի։

Իդա հախս կնիկ լէ կփորձա զիրիկ, կեսա.— Իրի՞կ, ըսօր օձ մի, ըսեց թը՝ «Խրտ քըզի տամ առնիմ, արոն, կղարոն, գովլաթ քըզի բերիմ, օսկի ու արծաթ քըզի բերիմ»։

Էն լէ կեսա թե.— Կնիկ, ի՞նչ կէղի, օձ ա, օր օձ ճիժ չէղի մարդու, բան չկա, ի՞նչ կէղի, աստծու տվածն ա։

Քաջանց թագավորի տղեն էդ կնկա ծոց կէղի, կլսի օր կայիլ ա ուր իրիկ, իդա հախս, սաբախտան Քաջանց թագավորի տղեն գելի կէրթա։ Հաբա մն օսկի կդնա ըդրա տղեքներու բարձի տակ ու կէրթա։

30—1086

Իրիկ կխարցու.— Էդ ի՞նչ փարա ա։

Կեսա.— Օձն ա բերե։

Կեսա.— Բան չէղի, ի՞նչ կէղի, տուր առ, ես կայիլ իմ։

Տղեքներուն լէ կեսա, տղեքներ լէ կայիլ կէղին։ Ախր փարեն քաղցր ա։

Օլոր օր իդա հարս աչքարա կխեծի ուր ձին ու գիգա, կնկա աչից կէրևա, տնրցոց չէրևա։ Կավլին կխորտին, խալ ու խալիչեն կպարղին, էդիկ դիկս կնստի խրտ կնկան, կղրուցին, քեֆ կէնին. խանաք կէնին։

Կնկա իրիկ գիգա, թամացք մե կառա, ծեռ կկապա։

Տղեն կեսա կնկան.— Էդի քու ի՞նչն ա։

Կեսա.— Իմ մարդն ա։

Էն իրիկ կեսա կնկան օր.— Թագավորի տղին ասա մըղի գուլթնի մի ռաթիր (գործիք), խոփ, զընջիլ բերա։

Կնիկն ա, կքաշե ղծին դուրս, Քաշանց թագավորի տղեն կխեծի, կէրթա, էն սհաթուն կառի գուլթնի ռաթիր, գիգա։

Կնիկ կեսա թը.— Քըզնե կխնթրիմ օր մըղի թաս-թեփսի ու բառոշ-սինի բերիս։

Օլոր օր կէրթա կխեծի, կառի զթաս-թեփսին, գիգա։

Օրմ է Քաշանց թագավորի տղեն գիգա, կը նստին յորղան դոշկի վրեն, կնստին դուռ ու կը մըժլին։ Էրկու խարս կալից գիգան։

Ըտ խարսներ կանիծին. «Աստված կտրա հրմլա իդարեն, բոպիկ ու խեղճ կէրթանք աշան կէնինք, փուշ, աստղփուշ, կոնգծի փուշ մեր օտներ շարվեր ա»։

Կեսուր կեսա.— Հաշ կեցիք,— ծեռ կգնա վըր բերնին կեսա,— հաշ կեցիք, ծեր կեսրեր հ՚օդա ա։

Իդա հախս խարսներ կպալուլվին, գիգան կկանին հ՚առեճ, կկզին ըդրա ծեռ։

Քաշանց թագավորի տղեն ուր կնկան կեսա.— Ըտ խարսներ հ՚որի կհերսոտին, կանիծին։

Էն լէ կեսա.— Գացած աշան էնած, բոպիկ ին, փուշ է չքվի իդոնց օտներ, սոլ կուզին։

Կնիկ զծին կքաշա, տղեն կխեծի, կէրթա կառի ամեկուն ջուխտ մի շիզմա, գիգա. իդոնց քիթ ու էրես խուռուշնոց ա շարուկ։ Խարսներուն ամեկուն գյարկե մի օսկի կբերա, ամեկուն շարք մի վզնոց օսկի կբերա։ Գիգա, դուռ գիշի։

Ցորղան-դոշակ կթալին, դուռ կնստին։ Կեսուր խարսներուն կեսա.

— Կուրբան էղեք ծեր կեսրերին, էկեք ծեռ, արիք տեսեք ի՞նչ ա բերեր ա ձողիկ։

Գիգան ծեռ, ամեկ ուրանց գլխու օսկիք. ուրանց վզի շարք օսկի, ուրանց ջիզմեք կառնին, կուրխնան, կէրթան։

Կմնա փել մի, ժուք ու ժամանակ մի թագավորի տղեն կտանին ասքար, կէրթա կռիվ։

Գիգա էդ կնկա իրկան, տղեքներուն, խարսներու մոտեն հըմենից խաթրը կառի, կեսա.

— Կնի՛կ, ես կէրթամ կռիվ, էս իմ մատնիկ կեցքիս քու մատ, թե իմ մատնըկի մատ խավըրավ չիտ ես կսպանվիմ, քու ծեռ խանե քաշե, քանի օր մատնիկի ակ չխավրեր ա, ես սախ իմ, դոր էղիմ, գիգամ։

Գելնի մատնիկ կեցկի ուր մատ, խաթր կառի ու կէրթա։

Կէրթա կռիվ կէնա, շատ ու քիչ՝ աստված գինա, տղեն կըսպանվի,

Կնկա հ'աչք հա՞վըր մատնըկին ա։ Թաժա խաց կիտան խեր, խերիաթ կէնին օր էդի պրծի իգա։

Տղեն կսպանվի, կնիկ կաչքա օր մատնըկի ակ խավրավ։ Գիլան ու կողփան։ Սև փուշին կքաշին ուրանց դլխուն, գիլան։ Խարս. տղեն, գիլան ու կողփան թը՝ էդ մարդ գնաց սպանվավ։

Ժուք ու ժամանակ մի կմնա, էդ կնիկն ա գելի, էղեկեցի մի (ժամ) կիտա շինել օր մեխք քաղվի։

Ընդոնք չխասան ուրանց մուրազին, դու խասնիս քու մուրազին։